ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«12» դեկտեմբեր 2018թ No 3202-Ա

2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի ԹԻՎ 653-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
Ընդհանուր և արտաքին կապերի բաժին
№ 1/7749 11 DEC 2018 ժամ 15.00

ՐԴ և 34-ՐԴ հոդվածները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Կից ☐ Դեղի կարգավիճակ
Նշումներ 1. 2015 թվականի մարտի 23-ի «Դեղերի կլինիկական հետազոտություններ անցկացնելու թույլտվություն ստանալու համար էթիկայի հարցերի հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2011 թվականի մայիսի 17-ի N 932-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 653 –Ա հրամանը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

12.12.2018

X

VERIFIED OCSP 12.12.2018 14:16:42 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

12.12.18 14:40

Հավելված
Առողջապահության նախարարի
2018 թվականի դեկտեմբերի «12» -ի
N 3202 - Ա հրամանի

ԴԵՂԵՐԻ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունվարի 24-ի N 63 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում նոր դեղերի կլինիկական հետազոտությունների անցկացման կարգ»-ի 8-րդ կետի պահանջները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Դեղերի կլինիկական հետազոտություններին մասնակցելու կամավորությունը, մասնակիցների անվտանգությունը և իրավունքների պաշտպանությունը ապահովելու, կլինիկական հետազոտության վտանգի և արդյունավետության հարաբերակցության, ինչպես նաև էթիկայի նորմերի պահպանման գնահատականը տալու նպատակով ստեղծել էթիկայի հարցերի հանձնաժողով և հաստատել նրա անհատական կազմը համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունվարի 24-ի N 63 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում նոր դեղերի կլինիկական հետազոտությունների անցկացման կարգով», «Դեղերի կլինիկական հետազոտություններ անցկացնելու թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և էթիկայի հարցերի հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2011 թվականի մայիսի 17-ի N 05-Ն հրամանով հաստատված էթիկայի հանձնաժողովի կանոնադրությամբ

սահմանված գործառույթների շրջանակներում իրականացնել հանձնաժողովին վերապահված լիազորությունները:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ Առողջապահության նախարարի տեղակալ Անահիտ Ավանեսյանին:

Հավելված
Առողջապահության նախարարի
2018 թվականի դեկտեմբերի «12» -ի
N 3202 - Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

ԷԹԻԿԱՅԻ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1) Նարինե Միրզոյան	Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կլինիկական ֆարմակոլոգիայի ամբիոնի վարիչ, բժշկական գիտությունների դոկտոր (հանձնաժողովի նախագահ, համաձայնությամբ),
2) Աննա Մկրտչյան	ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտ, գիտական և ներդրումային հարցերի գծով փոխտնօրեն, ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի ասիստենտ, դեղագետ, քիմիական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ),
3)Մարգարիտա Բեգլարյան	«Դեղագիտություն և դեղաբանություն. կրթություն և գիտություն» ասոցացիայի նախագահ (համաձայնությամբ),
4) Լուսինե Սահակյան	ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտ, կենսաբժշկագիտության ամբիոնի դասախոս, դեղագետ (համաձայնությամբ),
5) Իրինա Մալխասյան	Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի վարիչ, «Հերացի» համալսարանական հիվանդանոցային համալիրի անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի կլինիկայի ղեկավար, բժշկական գիտությունների դոկտոր, (համաձայնությամբ),
6) Արմինե Հակոբյան	Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կլինիկական ալերգոլոգիայի ամբիոնի դոցենտ, «Հերացի» համալսարանական հիվանդանոցային համալիրի ալերգոլոգիայի և կլինիկական իմունոլոգիայի կենտրոնի բժիշկ, բժշկական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ)

7) Մոնիկա Սարգսյան	Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, «Ոչ առևտրային իրավունքի խորհրդատվություն» կազմակերպություն, իրավաբան (համաձայնությամբ),
8) Մելանյա Բաղդասարյան	Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կլինիկական ֆարմակոլոգիայի ամբիոնի դոցենտ, բժշկական գիտությունների թեկնածու, (համաձայնությամբ),
9) Բաբկեն Պիպոյան	«Իրազեկ և պաշտպանված սպառող» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ),
10) Վիոլետտա Զոփունյան	«Իրավունքի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության ղեկավար (համաձայնությամբ),
11) Դավիթ Պետրոսյան	ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի տեղակալ (համաձայնությամբ):
12) Անահիտ Մկրտչյան	Առողջապահության նախարարության աշխատակազմի դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության դեղորայքային քաղաքականության բաժնի պետ (քարտուղար)